ՀՀ Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանի ուղերձը եզդի ժողովրդի Նոր տարվա՝ Մալաքե Թաուսի տոնի առթիվ

Այսօր մեր բարեկամ եզդի ժողովուրդը նշում է Նոր տարին՝ Մալաքե Թաուսի տոնը:

Թանկագի՛ն եզդի քույրեր ու եղբայրներ,

Ջերմորեն շնորհավորում եմ եզդիական համայնքին ազգային խորհրդանշական տոնի առթիվ: Մաղթում եմ, որ այս տարին լինի առողջության, երջանկության, ընտանեկան անդորրի և ուրախության տարի:

Հայ և եզդի ժողովուրդների եղբայրության, միմյանց նկատմամբ սրտացավության, հոգատարության վկայությունը ես ամեն օր տեսնում եմ Արագածոտնի մարզում: Վստահաբար կարող եմ ասել, որ մենք շարունակելու ենք ապրել միմյանց սատարելով և իրար նկատմամբ հարգանքով:

Շնորհավոր Չարշամա սարե սալե: